



## 19. ԱՐՍՈՐԴ ՄՈՒՐԱՏ

Ավչի Մուրատ մե օր կերնաց որսի, ման էկավ, ման էկավ, ոչինչ չըկարողացավ որսել. մեք քյարի վրան նստավ, դինճացավ, տեսավ՝ էն թեխեն՝ մե ծակի մեջեն, մե օձ զյուս էկավ, նաղուն, կարմիր, աչքերը սե, ծակի դեմը կոլոր ճըղբզ քյաշեց, մտավ մեջը, մեջեն թռավ, սողակն յուրը տվեց սարի զյոշը, շրջվավ մեկէլ յանո՞ւ: Մեք սըհաթեն ետ էլի էն ծակեն մե օձ դուս էկավ. ի՞նչ օձ՝ սպտակ, նաղուն, ալաք-բալաք ըռանկյով, մտավ էն ճըղբին մեջը: Էն թեխեն տրսավ իշ՝ մե սե, մուխտար, խաստ օձ էկավ, իրարու լգեսեն էր, Մուրատ տեսնըս էր, զարմացավ, ասաց. «Ըղենց բան չի ըլի, էն սըփտակ, նաղուն, ալաք-բալաք օձը էն սե, մուխտար օձի խետը փաթթված՝ լցեսեն իրարու»: Թասիպը դապուչ չարաց, ասաց. «Էն միրուն օձը ընչի՞ կըսազի մուխտար օձի խետ փաթթվեն, յափաշ էն մուխտար օձին սպանեմ»: Թվանքը քյաշեց, զարկեց, կյուլեն կերնաց, կըպավ էն խորոտ օձին: «ԱՀա՛, —ասաց, —ես վիրը զարկիմ, վիրը կպավ»: Մուխտար օձը փախավ, կերնաց. Էն խորոտ օձը քյաշ տալուն խասավ, իրան բյոնը մտավ: Էրկու սըհաթին ետեն առաջվա նաղուն օձը ուրախ-ուրախ սարերեն էկավ, իդաբյոնը տրսավ, ճըղբզը խափրիր էր, ասաց. «Զէլավ, յաղին իմ զյուշման էկիրի»: Կանչեց Հյուր կյաղաներին, ասաց. «Էղ վյա՞վ ի էկի ներս»: Ասին. «Թագավո՞ր ապրած կենա, մարդ չի էկի»:

Ասաց.—Լպա էղ ճըղբզը վյա՞վ ի խափարի:

Ասին. —Թագուն զյուս էկավ շուռ ի զյալու, էկեր ի ներս, էլ մարդ չի էկի:

Թագավորն էկավ ներս, վախենաս էր, թե ինչ մարդ պտի մտնի զյախ: Կյունաց տրսավ թագուհին արընխառ ընկերի յուր տեղի վրան: Թագավոր վախենալով խարցուց. «Էղ ի՞շ էրունի քյո վրան»:

Ասաց.—Քյո տուն ավրվի, չես ասելի, զյու կերնացիր, քյո էտեն ես զյուս էլամ, որ մե քիչ շուռ իզյամ էր, Ավչի Մուրատ քյարը տակը նատիր էր, ընձի զարկեց կյուլայով, խասավ, որ ընձի սպաներ, շուռ մտա իմ բյոնը:

Թագավորն ասաց.—Ավչի Մուրատ քեզ խետ ի՞շ ցավ ուներ, զարկեր:

**Ասաց. — Զեմ նյալի:**

Կանչեց յուր կյաղաներին, կերնացին էրկու շայմար օձ բերին:

**Ասաց. — Էղ սրհաթին կէթաք Մուրատին տունը, կըմտնեք դյար ճզմաների մեջը, որ առատունը տեղեն կըլի ճզմաները խայնելու, դյար կընկի տակեն ընենց կըզարկե՛ք, որ քելլեն դյուս իզյաք, թե չէ, ձեզի տողմա-տողմա կըփըրթեմ:**

Էն սրհաթին էն էրկու օձը գլոխ տվին թագավորին ու դյուս էկան, կերնացին թեխ Մուրատի տունը: Մուրատ նստիր էր յուրանց փայան, դրկեցներն էկան, ասին. «Մուրա՛տ, էսօր քյո ըոյան-կը կախ ի, իշ էլիր ի քեզ, ըմեն օր ուրախ, օսօր ընենց մթնիր ես»: Ասաց. «Քեֆ չունեմ»: Դրկեցներ մե քիչ զուցացին, հելան կերնացին: Մուրատ քերնավ, առատունը տեղեն էլավ, կնիկն ասաց. «Ա՛յ մարդ, էղ ի՞նչ ի պատախի քեզ, էրեկվըկեն մթնիր ես»: Ասաց. «Կընկանը բաղդ չըկա»:

**Ասաց. — Ընչի՛, ա՛յ մարդ, ի՞նչ ես տըսի:**

**Ասաց. — էրեկ որսես եմ էր, կերնացըմ, տըսամ, ի՞նչ. մե նաղ-չուն, ճլպտուն, ալաք-բալաք, սև աչքերով օձ էլավ, էկավ յուր ծա-կի դեմը մե ճըղը քյաշեց, ճըղըգի մեջեն թուավ կերնաց սարերը չուռ իզյալու, մե քիչ մնաց, էլի էն ծակեն մե օձ դյուս էկավ, իշ օձ. չուտես էր, չըխմես էր, կայնես էր, դյարը թամաշ անես էր. սրվ-տակ, կարմիր, ալաք-բալաք ըոյանկով էր, մտավ էն ճըղըգի մե-ջը, մեյնէլ տըսա՛ էն թեխեն մե մուխտար, խաստ, սև օձ էկավ, էս օձը թուավ ճըղըգի մեջեն կերնաց, խառվավ դյարը, փաթըրթվան, իրարու լգեսեն էր, խաղասեն էր, հեանեաք էն էր անելի, թասիպս դապու չարեց, թվանքը քյաշիմ, որ էն մուխտար օձին զարկիմ էր, կպավ նաղչուն օձին, սև օձը փախավ, կերնաց իրան տեղը, էն նաղչուն օձը էկավ, մտավ ծակը: Ես շատ ափսոսիմ դյար փրան, շենց էն ի պատճառ, որ մթնիր իմ:**

Էն էրկու օձն, որ էկիր են էր Մուրատին զարկելու, դյարը խոս-քերը որ լսին, իրարու զուրցացին, ասին. «Էրթանք, թագավորին ասենք, ըղենց էղ մարդը մեղավոր չի, որ սոյարը զարկենք»: Կեր-նացին, թագավորի մյոտը խասան, թագավորն ասաց. «Զարկի՞ք, թե չէ»: Ասին՝ չէ՛: Ասաց. «Ա՛յ, հարայ, դյանցն սպանե՛ք»: Ասին. «Թագավո՛րն ապրած կենա, մե խնդիր ունինք, ասենք, էլի մեզ սպանի՛»: Ասաց՝ ասե՛ք:

— Իշխո՛ դյուս հրամայիր մեզ, որ Մուրատին սրպանենք. կերնա-ցինք, մտանք դյարը ճզմային մեջը. դյանք տեղեն էլան առատունը, կնիկն ասաց մարդուն. «Ա՛յ մա՛րդ, դյուս իրիկվկե տիսուր ես, ի՞նչ ի պատախի քեզ»:

**Օձերն ասին, ինչ որ Մուրատեն լսած էն էր:**

Թագավորն ասաց.—Այ հավար, կերնացե՛ք, Ավչի Մուրատին էս սըհաթին բերե՛ք ինձ մյոտ:

Օձերը ետ դարձան, էկան թեխ Ավչի Մուրատը դռան առաջը կայնան, Աստուծո հրամանովը լեզու էլան դարը կանչին՝ Մուրատ, Մուրատ, հարի՛ դյուս:

Մուրատ դյուս էլավ դուռը, տրսավ, ի՞շ. էրկու օձ՝ դիք կայնած պոչերի վրան, մեկը՝ դռան էս յանը, մեկը՝ էն յանը: Զարմացավ, ասաց. «Տե՛ր Աստված, էդ ի՞շ օձեր են»: Ասին. «Մի՛ վախեցի, հարի՛, էթանք, մեր թագավորը քեզ կանչել ի, մենք իրկուն էկանք, որ առատոն քեզ զարկենք էր, դու որ կնկա ասիր, էլ քեզ չըզարկինք, կերնացինք, թագավորին ասինք, թագավորն ասաց՝ էս սըհաթին իգյա ինձ մյոտ»:

Ավչի Մուրատ վախենաս էր, օձերն ասին. —Խաթրով էլ ըլի, տը գյաս, զորով էլ ըլի, տը գյաս:

Էլավ կերնաց, օձերն ճանբախն ասին ըսդյարը. —Դու քյո ասածները սապութիր, իշ որ ուզես, թագավորը քեզ կրտա՛ թե՛ փող, թե՛ խազնա, իշ որ կրտա, չի վերցես, ասա՛ քյո լեզուն մե իրեք խետ իմ բերնին մեջ խա՞ն, որ քյո բերնին մեջ խանեց, իշ լեզու ասես, խասկընաս էր:

Կերնացին, խասան թագավորի տունը, կերլոխ տվեց թագավորին, կայնավ: Թագավոր կանչեց, տարավ ջոկ տեղ, զյողնուկ խարցուց դյարեն, ասաց. «Դու ընչի՞ ես զարկեր իմ կնկան կուլայով»:

Ասաց. —Թագավոր սաղ ըլի, ես էկերիմ էր ավ անելու, նատամ մե քյարի տակ, դինճացամ, տրսամ, իշ մե օձ մե ծակեն դյուս էլավ, նաղչուն, խորոտ, աչքերը սկ օձ էր, ծակի դեմը մե ճըղըզ քյաշեց, մեջեն թուավ, էլավ, իրան տվեց սարը, կերնաց սարի քյամակ շուռ ի գյալու, մե քիչ մնաց, էն ծակեն էլի մե օձ դյուս էկավ, մտավ էն ճըղըզին մեջը, մեյնէլ տրսամ՝ էն թեխեն մե սկ, մխտար օձ էկավ, էդ նաղչուն օձը էն ճըղըզին մեջեն դյուս թուավ, կերնաց էն սկ, մխտար օձին խետը խալասեն էր, թասիպս զապուշ չարաց, թվանքը քյաշիմ, որ էն մխտար օձին սպանեմ էր, կպավ սըվտակ, նաղչուն օձին, ես շատ ափսոսամ դյար վրան:

Թագավոր միտք արաց, ասաց. —Էն, իշ որ առաջ դյուս էկամ, շրջկամ սարին էն յանը, էն ես եմ էր. էն մեկէլ էլի էն ծակեն էկիրի, ճըղըզի մեջ մտերի, թոփր կերնացիր ի, սկ օձի խետ փաթըթվիր ի, իմ կնիկ ի, յաղին՝ իմ կնկան սիրող կա:

Թագավորը ասաց. —Որ էն սկ օձը բերենք, կըճաչնա՞ս, վեա՞ր օձն ի:

—Թագավորը սաղ ըլի, որ տրսանամ, ճաչնամ:

**Թագավորը** հրամայեց իրա մշայներին.—էս արհաթին կըպուաք, իշքան օձ կա, ժողվին սղալիս: Օձերը զըմեն ժողնվան, էկան, թագավորի դռան առաջ կայնան, մե աթոռ դրին Մուրատի տակը, նստավ կուշտը: Օձերին հրամայեց, ասաց. «Մեյմեկ էկե՛ք, մեր առջևեն ընցեք կերնացե՛ք»: Օձերը մեյմեկ էկան, թագավորին, Ավչի Մուրատին առջևեն սողալեն էթասեն էր: Թագավորն ասաց. «Մուրա՛տ, լա՛վ ճանչցի, վեա՛ր օձն ի, որ չես ճանչցի, քեզ տողմատողմա կըփըթեմ»:

Իրեք օր, իրեք զիշեր օձերը մեյմեկ էկան, ընցան, պրծան:

Թագավորն ասաց.—Վեա՞ր օձն ի, Մուրա՛տ:

Ասաց.—Թագավոր սաղ ըլի, էն օձ սղանց մեջ չըկա, ընչի՞ ուրիշի մեղքը առնեմ:

Թագավորը ասաց.—Էլ օձ կա՞, որ չի էկի:

Ասին.—Կա մե քանի խատ, որ չեն էկի:

Ասաց.—Էս սրհաթին կանչեք բերե՛ք դյանցը:

Էն սրհաթին կերնացին, ժողվին բերին, էկան, որ դեմեն ընցնեն էր, էթան էր: Մուրատ տրսավ, որ էն սև, մըխտար օձը գո դեն ի զյալի, յուրը տալի էն օձի տալտան, էղ օձի տալտան, որ ի զյա, ընցնի, չի տրսնի: Ասաց. «Թագավոր սաղ ըլի, գո՛, էն օձն ի»: Որ ասաց, էն օձին կայնեցուց, ըմեն օձերին ասաց. «Կերնացե՛ք ձեր բյոները»:

Էն օձին պախին, ըմեն կերնացին. դրին էն օձին տողմա-տողմա փրթին:

Թագավորը Մուրատին ասաց.—Դու իմ մուրազը կատարիր, քեզ իշ մուրազ ունես, ասա՛, կատարեմ, իշ որ ուզես, կտի տամ:

—Թագավորը սաղ ըլի,—ասաց,—ես աշխարքիս իրեաը մուլք, փող շատ ունեմ, ես քեզնե խնդրես եմ, որ քյո լեզուն իրեք խետ դնես բերանս, քյաշես խանես:

Թագավորը խոսացիր էր, իշ որ ուզեր, կտի տար, իրեք խետ յուր լեզուն Մուրատի բերան թալեց, խանեց, ասաց. «Էղ բաները սկի մեկին չես ասի, որ ասիր ես, քեզի քյո տան մեջ ըլի, վեա՞ր տեղ ըլի, բռնեմ էր, տողմա-տողմա փրթեմ էր, դե՛, դու ե՛լ, քելի՛, ես իմ կնկա դիվանը կանեմ:

Ավչի Մուրատ էլավ, էկավ յուր տունը. մեկ օր տանը մեջ նստած էր, կովը նախրեն էկավ, պոռաց, էնի ծղզաց:

Կնիկը ասաց.—Ա՛յ մարդ, ընչի՞ ծղզացիր:

—Կովը պոռաց, ծղզացի, —ասաց:

Մեկ օր էլ ճնճուղը կայնիր էր ծառի վրան, ճկըլաս էր, Մուրատ ծղզաց, կնիկը կպավ մարդի յախեն. «Ընչի՞ ծղզացիր»:

Ասաց.—Ճնճուղը ճկըլաս էր, ես ծղզացիմ:

—Պյաս դու դեանց լեզուն կինսասես. կովը պոռալի, դու ծղզա-

սես, ձնճուղը ճլվըլալի, դու ծղզասես, ասա՛ ընձի, ի՞նչ ես խասկա-  
նալի դյանցեն, ի՞նչ են ասելի, որ դու ծղզասես:

—Պոասին, ճլվասին, ես էլ ծղզասիմ, բան չեմ խասկեընալի:

Կնիկը կպավ մարդի յախեն, ըմեն օր կոփվ էր անելի, զալմա-  
ղալ էր անելի. «Կտի ընձի ասես, որ ասես»: Մուրատ մտածես էր՝  
իրան կնկան ասեր թե չասեր, ասեր ինք կտի սպանվեր, չասեր,  
կնկան ձեռնեն չեր պրծնելի, մտածես էր, կնկան պրախ տամ, չըլի:  
Մուրատ միտք անելեն կյընաց թեխ քյաշվանը, տըսավ, ի՞շ. էրկու  
էծ, մե թեքյա, մե էծը մտավ առուն, ընցավ ջրեն էն յանը, կանչեց  
թեքյային, թեքյան ասաց. «Խո ես ավձի Մուրատի պես իմ խելք չիմ  
ցնտի, որ առուեն ընցնիմ, իգյամ թեխ քեզի, յա՛ ոտս կոտովի, յա՛  
մեկ փորձանք պատախի, ընչի՞ դու չիս իգյալի ընձի մյոտ»:

Որ ըդենց էծեր մըկմըկացին, Մուրատ խասկըցավ.—Հայ-  
հայ,—ասաց.—Էդ ի՞նչ բանի ես բռնիր իմ էր, ես էդի պարա էլ  
խելք չունեմ, էն կնիկը չըլի, ուրիշ կնիկ կառնեմ:

Կյընաց տուն, յուր կնիկը պրախեց, մե վեց ամիս ընցավ, օձի  
թագավորը Մուրատին կանչեց, ասաց.—Դու լավ արիր, որ կնիկդ  
պրախիր, թե չէ օձերն օղորկես եմ էր, քեզի փրթեսեն էր:

Թագավորը Մուրատին տարավ, խարսնիս արաց, մեկ խազնա  
էլ տվեց. «Տար կե՛ր, քե՛ֆ արա», ասաց:

Կյընաց, խասավ ավի տեղը, տըսավ՝ ինչ. մե մարալ թվանքը  
քյաշեց ոտի վրան, որ զարկեր, տըսավ՝ ինչ. մե թրնտաս տղա, չու-  
զեց զարկել, ուզես էր դառնալ, մնկէլ էլի տըսավ մարալ ի, թվան-  
քը, որ զարկեր, տըսավ՝ մե չափխաս մարդ ի, էլի առավ, որ ետ  
դառնար, մի քիչ տեղ կյընաց, ետ դառցավ, տըսավ, էլի մարալ ի,  
ասաց. «Աստվա՛ծ, էդ ինչ բան ի. մե խետ տըսամ ճաշիլ տղա ի, մե  
խետ էլ չափխաս մարդ, էս խետ էլ, տեսնըս եմ խալիվոր ի. մեկ էլ  
վատա Աստուծու ըլի որ ես էդ ավի թարքը տամ: էղքամ ավղու-  
չություն արիմ, ի՞շ քցիմ մազի վրան, որ դեարմեն ետ իշ կտի քցեմ  
մաղի վրան»:

Թվանքը թալեց դեախ, ասեց. «Էլ էդ ըլի, որ ես ավի իգյամ»: